29.նոյեմբեր 2023թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց >>

ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Խաչատրյանից

<<Ֆոտոն>> ՍՊԸ -ի տնօրեն

Նելլի Պետրոսյանին

Հարգելի Նելլի Պետրոսյան

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի (այսուհետ Գնորդ) և <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի (այսուհետ Վաճառող) 24. օգոստոսի 2023թ. կնքված N <<ԱԹՁԴ/ԱՊՁԲ/ԳՀ/2023/2.6>> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.1.1 կետը՝ մատակարարման ժամկետները խախտվել են _1_ օրից ավելի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով <<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հարկադրված է միակողմանի լուծել պայմանագիրը՝ 29 նոյեմբերի 2023թ-ից: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526 Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 40608 քառասուն հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամի և 27072(քսանյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամի չափով վճարելու համար:

Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ՀՀ Ֆինանսների նախարարություն, Հ/Հ 900338000392):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն <<Ֆոտոն>> ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Խաչատրյան